

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-ԻՆ ԺԱՄԸ
10:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՎԵՐԱ-
ԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

- | | |
|---------------|--|
| Ա. Գևորգյան | ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար |
| Դ.Սարգսյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար |
| Ս. Կարապետյան | ՀՀ գյուղատնտեսության նախարար |
| Ե. Զախարյան | ՀՀ կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ |
| Ս.Պապյան | ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ |
| Ռ. Ալավերդյան | ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ |
| Կ.Արեյան | Երևանի քաղաքապետի տեղակալ |
| Վ. Մովսիսյան | ՀՀ անտառների վերականգման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն |
| Ա. Նալբանդյան | ՀՀ Լոռու մարզպետ |
| Ա. Ղուլարյան | ՀՀ Տավուշի մարզպետ |
| Կ. Շահգալդյան | ՀՀ Կոտայքի մարզպետ |
| Ս. Սահակյան | ՀՀ Արագածոտնի մարզպետ |
| Է. Ղազարյան | ՀՀ Վայոց ձորի մարզպետ |
| Հ. Բերբերյան | ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար |
| Կ. Մարգարյան | ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության պետ |
| Մ. Մաթևոսյան | «Հայանտառ» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրեն |

- Ա. Մարգարյան ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության գլխավոր մասնագետ

- Լ. Գրիգորյան ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գլխավոր հաշվապահ

1. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի 2012 թվականի հաշվետվությունը՝ հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության մասին

(Վ. Մովսիսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի 2012 թվականի հաշվետվությունը՝ հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության մասին:

2. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2012 թվականի ֆինանսական հաշվետվության մասին

(Վ. Մովսիսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2012 թվականի ֆինանսական հաշվետվությունը:

3. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2013 թվականի հաստիքացուցակի և գործադիր մարմնի պահպանման (վարչակառավարչական) ապարատի ծախսերի նախահաշվի մասին

(Վ. Մովսիսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2013 թվականի հաստիքացուցակը և գործադիր մարմնի պահպանման (վարչակառավարչական) ապարատի ծախսերի նախահաշվը՝ 20594,4 հազար դրամ գումարով:

4. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2013 թվականի իրականացվելիք ծրագրերի և ֆինանսավորման աղբյուրների մասին

(Վ. Մովսիսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) թույլատրել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Վ. Մովսիսյանին՝ շարունակելու և ավարտելու Երևանի անտառտնտեսության «Էրեբունու անտառպետության» 51 հեկտար տարածքի անտառապատման աշխատանքների ծրագրի 2-րդ փուլը,

2) հաստատել Շիրակի մարզի անտառվերականգնման համալիր ծրագրի շարունակման շրջանակներում՝ «Արթիկի անտառպետության 20 հեկտար տարածքի վրա անտառապատման և ցանկապատման» ծրագիրը.

Հաշվի առնելով աշխատանքների շարունակականությունն ու հրատապությունը, թույլատրել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենին Շիրակի մարզի անտառվերականգնման համալիր ծրագրի շարունակման շրջանակներում՝ «Արթիկի անտառպետության 20 հեկտար տարածքի վրա անտառապատման և ցանկապատման» աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման և անտառապատման ու ցանկապատման աշխատանքների իրականացման կապալառու կազմակերպություններին ընտրել բանակցությունների միջոցով:

3) հանձնարարել ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանին, ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանին և ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Վ. Մովսիսյանին՝ քննարկել «Էրեբունու անտառպետության» 51 հեկտար տարածքի անտառապատման աշխատանքների և ՀՀ Շիրակի մարզի անտառվերականգնման համալիր ծրագրի շարունակման շրջանակներում՝ Արթիկի անտառպետության 20 հեկտար տարածքի վրա անտառապատման և ցանկապատման ծրագրերի ֆինանսավորման աղբյուրների, ինչպես նաև հիմնադրամի գործադիր մարմնի պահպանման ծախսերը լրացնելու հարցը և ներկայացնել առաջարկություն.

4) հանձնարարել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Վ. Մովսիսյանին՝ ՀՀ մարզպետների հետ համատեղ քննարկել 2014 թվականի ընթացքում անտառային ֆոնդի հողերի, անտառների վերականգնման և

նոր անտառների հիմնման ծրարերի իրականացման հետ կապված հարցերը և ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել համապատասխան առաջարկություններ.

5) հանձնարարել ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանին՝ հաշվարկել բելառուսական կողմի ներկայացրած՝ անվճար տնկանյութի (փակ արմատային համակարգով) ներկրման առաջարկի հետ կապված ծախսերը և այն ներկայացնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ